Մարտիրոս սրկ.ին հետ, ու վերջինս զրկուած է Իզմիր՝ որպէսզի եթէ հոն ալ կան ուխտաւորներ նաւ առաջնորդէ. նաւուն մէջ գտնուած են 200 հայ, 100 յոյն ուխտաւորներ և տաճիկ նաւավարներ. Մարտիրոս վերադառնալուն՝ տեսած է որ նաւը հովէն քշուած ու տարուած է և ալէկոծութենէն ընկղմած՝ Իզմիրի առջև, և ուխտաւորներն ալ ծովամոյն եղած են. (տե՛ս Մարտիրոս սրկ. և Գրիգոր պտրք. Շղրայակիր)։

ԵՐԵՄԻԱ ՎՐԴ. ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆՑ, ՎԱՆԵՑԻ (ՏԷՎԿԱՆՑ).— Մբ. Լիմ Անապատի. 1866ին կ'այցելէ Ս. Յակոբի վանքը (Հ. Հ. էջ 271), 1868 ին եպս. կը ձեռնադրուի Ծոփաց աշխարհին համար. իր գրաւոր աշխատութիւններէն գլխաւորն է Հայրենասիրութիւն Հայոց անուն գործը։

ԵՐԵՄԻԱ ՔՀ. ԽԱՍԳԻԻՂԻ (Կ. ՊՈԼԻՍ).— 1865 ին կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եւ ըստ առաջարկութեան Եսայի պտրք.ի, կը կնքէ պայմանագրութիւն մը՝ Օրացոյցի պատրաստութիւնը սորվեցնելու՝ հինգ հազար դահեկանի սակարկութեամբ՝ միաբան մնա. Յարութիւն Զինճիրճեանի եւ ուրիշ միաբաններու. այս խնդրին մանրամասնութիւնները տեսնել (Սիօն 1869, էջ 29-32)։ Ս. Յակոբի վանքի Օրացոյցը 1867ին սկսած է հրատարակուիլ Երեմիա քհ.ի ուսուցման համաձայն. յիշեալը 1880 ին կը վախճանի Խասգիւղի մէջ. բացի իր Օրացոյցներէն, որոնց հրատարակութեանը ձեռնարկած է սկսեալ 1839 էն, հրատարակած է նաեւ 1864 ին տումարական գրուածներ։

ԵՐՈՒԱՆԴ ԱԲ. ՔԻՀԵԱՑԵԱՆ. ԱՐԱԲԿԵՐՑԻ (ԾԱԳ. ԳԻԻՂԱՑԻ).— Ծ. 1903ին, աշկ. Արաբկիրի Մայր Վարժարանին. 1915ի տարագրութեան ատեն կը կորսնցնէ իր ծնողքը և պարագաներէն չատերը. տարագրութենէն ողջամբ կը վերադառնայ հայրենիք և 1922ին կուգայ Հալէպ, ուր երեք տարի մնալէ յետոյ 1925ին Երուսաղէմ կը հասնի եկեղեցականութիւնը ընդգրկելու համար եւ կընդունուի միաբան Ս. Յակոբի վանքին. դպրութեան և սարկաւագութեան աստիճաններ նախապէս ստանալով 1928 Հոկտ. 14ին արեղայ կը ձեռնադրուի Ս. Գերեզմանին առջև։

ԵՐՈՒԱՆԴ ԵՊՍ. ՓԵՐՏԱՀՃԵԱՆ, ԱՄԱՍԻԱՑԻ.—Մբ. Արմաշու դպրեվանքին, Ծ. 1874 ին. Զա. 1901ին. Ա.ա. փոխանորդ Քղիի 1905ին. 1908ի կթղ. ընտրութեան պատգամաւոր, պա-